Կարգապահական գործ թիվ ԿԳ-22001

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի մայիսի 24-ի թիվ 20-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/10-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀՐԱՆՏ ԳԱԳԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի և Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հրանտ Գագիկի Վարդանյանի **(արտոնագիր թիվ 2743)** (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ քաղաքացի Արմինե Պետրոսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**) հայտնել է, որ փաստաբան Հրանտ Վարդանյանի հետ 2020 թվականի հուլիսի 17-ի կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ փաստաբանի պետք է իրականացներ Դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, կազմեր անհրաժեշտ դատավարական փաստաթղթեր և մատուցեր իրավաբանական խորհրդատվություն ՀՀ քննչական կոմիտեի Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում նախաքննության ընթացքում:

Դիմողը հայտնել է, որ վճարել է պայմանագրի գնի 450.000 ՀՀ դրամից 400.000 ՀՀ դրամը, սակայն փաստաբանը տևական ժամանակ չի կատարում պայմանագրով սահմանված պարտականությունները, ինչպես նաև չի պատասխանում հեռախոսազանգերին:

Վերոգրյալի հիման վրա, Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Հրանտ

Վարդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2022 թվականի հունվարի 14-ի թիվ 6-Ա/ԿԳ-22001 որոշմամբ փաստաբան **Հրանտ Գագիկի Վարդանյանի** նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) **2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով:**

2022 թվականի հունվարի 18-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով Դիմողը հայտնել է Պատասխանողի հետ ընդհանուր համաձայնության գալու մասին և ոչ մի բողոք ու պահանջ չունի: Դիմողը հավելել է, որ Պատասխանողը իրեն վերադարձրել է վճարված գումարը՝ 18.02.2022թ. ստորագրված ստացականի համաձայն:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը նախապատրաստողին բացատրություն է ներկայացրել, որով հայտնել է, որ հանդիսանալով Դիմողի ներկայացուցիչ ժամանակին և պատշաճ կերպով իրավաբանական օգնություն է ցուցաբերել, մասնակցել է նրա հարցաքննություններին և կազմել դիմումներ:

Պատասխանողը հավելել է, որ հանդիպել է Դիմողի հետ նրա դժգոհության պատճառները պարզելու համար: Հանդիպման ընթացքում Դիմողը ոչ մի հիմնավոր պատճառ չի ներկայացրել:

Պատասխանողը նաև հայտնել է, որ ամբողջությամբ վերադարձրել է Դիմողին վճարված հոնորարը, որպիսի պայմաններում կատարված ամբողջ աշխատանքը կատարվել է անվճար:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2022 թվականի մարտի 16-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

2022 թվականի մարտի 17-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2022 թվականի մայիսի 24-ին ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զանքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Արմինե Պետրոսյանի և փաստաբան Հրանտ Գագիկի Վարդանյանի միջև 2020 թվականի հուլիսի 17-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է կողմերի ներկայացրած պայմանագրի պատճենով:*
2. Պայմանագրի 1.2. ենթակետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ, կատարողը պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ ՀՀ քննչական կոմիտեի Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում նախաքննության ընթացքում Դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, անհրաժեշտ դատավարական փաստաթղթերի կազմում և

իրավաբանական խորհրդատվություն:

3. 17.07.2020թ. իրավաբանական (փաստաբանական) ծառայություններ մատուցելու պայմանագրով նախատեսված ծառայությունների վճարը կազմել է 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվել է Արմինե Պետրոսյանի կողմից: *Սույն փաստը հաստատվում է ներկայացված վճարման անդորրագրերով:*
4. Փաստաբան Հրանտ Վարդանյանի կողմից վերադարձվել է Դիմող Արմինե Պետրոսյանի կողմից վճարված 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ հոնորարը: *Սույն փաստը հաստատվում է Արմինե Պետրոսյանի կողմից գրված և ստորագրված ստացականով ինչպես նաև գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանին տրված բացատրությամբ:*
5. Արմինե Պետրոսյանի կողմից գրված և ստորագրված ստացականում նշված է, որ. «… վերջինիցս բողոք պահանջ չունեմ, քանի որ չի եղել դեպք, որ վերջին մեկ ու կես տարվա մեջ զանգեմ հանդիպելու համար կամ այցելեմ նրա գրասենյակ նա չպատասխանի զանգիս կամ ինձ չընդունի…:» *Սույն փաստը հաստատվում է Արմինե Պետրոսյանի կողմից գրված և ստորագրված ստացականով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հրանտ Վարդանյանը փաստաբան է հանդիսանում 27.12.2019թ., և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 14.01.2022թ. թիվ 6-Ա/ԿԳ-22001 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հրանտ Վարդանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Կարգի 7.2.6-րդ ենթակետի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով՝ Արմինե Պետրոսյանին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու վարքագիծը ստուգելու փաստերի առթիվ:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն փաստաբանի օգտին:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերին (պայմանագիր և վճարման անդորրագրեր), ապա դրանցից բխում է, որ փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, սակայն այդ փաստաթղթերով չի հաստատվում փաստաբանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերը խախտելու հանգամանքը:

Բացի այդ, կարգապահական վարույթի ընթացքում Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններով և դրանց կից ներկայացված 18.02.2022թ. ստացականի պատճենով ոչ միայն հերքվել են Դիմողի կողմից նախկինում նկարագրված հանգամանքները, այլ նաև հաստատվել է հակառակը: Մասնավորապես, 18.02.2022թ. ստացականում դիմողի կողմից նշվել է. «վերջինիցս բողոք պահանջ չունեմ, քանի որ չի եղել դեպք, որ վերջին մեկ ու կես տարվա մեջ զանգեմ հանդիպելու համար կամ այցելեմ նրա գրասենյակ նա չպատասխանի զանգիս կամ ինձ չընդունի»:

Խորհուրդը նաև ի գիտություն է ընդունում, որ 28.02.2021թ. Արմինե Պետրոսյանը, գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանին տրված բացատրությամբ հայտնել է, որ իր և փաստաբան Հրանտ Վարդանյանի միջև տարաձայնությունները հարթվել են և խնդրել է բողոքը թողնել անհետևանք, իսկ փաստաբան Հրանտ Վարդանյանը վերադարձվել է Դիմող Արմինե Պետրոսյանի կողմից վճարված 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ հոնորարը՝ ելնելով փաստաբանի մասնագիտության հանրային հեղինակությունից:

Վերոնշյալ հիմք ընդունելով Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հրանտ Գագիկի Վարդանյանի (արտոնագիր թիվ 2743) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-22001 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

24 մայիսի 2022թ.
թիվ ԿԳ/10-Ա
ք. Երևան